ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 472-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1667-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Սևանա լճի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների, ձևերի և կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1667-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) համաձայն «Սևանա լճի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետի՝ յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից սահմանվում են Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակները և ժամկետները, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններն ու պահանջները.».

2) N 3 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որս իրականացնելու պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագիր) կնքելու համար հիմք են հանդիսանում յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից սահման-ված դրանց օգտագործման տարեկան առավելագույն չափաքանակները:».

3) N 3 հավելվածի 5.1-ին և 5.2-րդ կետերում «տարեկան ծրագրով» բառերը փոխարինել «յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից» բառերով.

4) N 1 ձևի «տարեկան ծրագրով» բառերը փոխարինել «յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից» բառերով.

5) N 2 ձևի 2.4.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.4.12. գործել յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից սահմանված Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակներին և ժամկետներին, արդյունագործական որսի կազմակերպման պայմաններին ու պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1667-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ